57. ՔԸԼՍՈՆ

Կէղնի, չէղնի մարդըմ, կնիկըմ։ էդ մարդու անուն Քըլսո կէղնի։

Քըլսոն է, ճանճ տեսնա կվախենա, էդոր հ՝ապով տարին տրսվէրկու ամիս տնեն դուրս չէլնի, բա՛ էնէն, լեղին կպատռեր։

Իմալ կէղնի, կնիկ կտեսնա օր իրիկ դատք ու դատումի հ՝ետևեն չէրթա, օրըմ դուրս կէլնի օր շըռե, կնիկ հ՝ետևանց կհ՝ըլոնդե, կիգա դուրս, զդուռ կգինե, զրոզէ կթալե. կիգա պառկի։

Քըլսոն է, դուռ կկանի, կիշքե օր մըժկներ տղտղալեն էկան ուր բոլոր։

— Կնի՛կ,—կասե,—քու աստծու սիրու խաթրի համար էղնի, զդուռ բաց, մտնիմ ներս, հըմկա էկան մըժկներ կուտին զիս։

Կնիկ կասե.—Մա՛րդ, քու հոգին էլնի, զդուռ չը՛մ բանա, իսկի զահմաթ մ՝ուտի, հըմա զքու թաղարուկ տես, գնա աշխատի, բան բի, զդուռ բանամ։

— Կնիկ,—կասե,—մադամ օր չըս բանա, մը՛ բանա, բաբագան խալմա ընծիկ թուրըմ կա զարկուկ հ՝առեք ու զիմ չվան բի տուր հ՝իս, ես կէրթամ։

Կնիկ կէրթա, կբերե հ՝էրդըքնըվեր կիտա հ՝ինք, զչվան կապե ուր մեջք, զթուր կթալե վըզնըվեր ու կէրթա սար։ Կէրթա սար,

հեռեվանց կիշքե, կտեսնա օր սարում գլուխ կրակ կվառին, քառասուն հարամի թափած ին կրակի բոլոր, յոթ կանթեն պղինձըմ գրած ին վըր կրակին, մեկ-մեկ զհորթկներ կվերցուն թալին մեջ ու կխաշխոռնին, հանին սաղ-սաղ լանկողդին։

Կէրթա, կէրթա կէլնի սարու գլուխ, էդոնց խեչ, ճամբու հետ ինքն ուրեն կասե. «Ախը՛ր, իմ կնիկ էրեց, էլ փարա չէնե, պետք է ֆարասաթով դնիք, խելքով հանիք, օր վնասըմ չի գա վըր մզիկ»։

Կէրթա, կէլնի էդ քառասուն դևի խեչ, կասե.—Բարև՛ ձի ախպե՛ր։

Կասին.—Աստծո՛ւ բարին, դու վո՞րն իս։

Կասի.—Դրա դուք զիմ անուն չըք լսերի ի։ Ես Քըլսոն իմ, վիրն օր թուրըմ ղարկիմ, հազար կտոր կէղնի։

Քառասուն դևն է, օր զէդի կլսին, կբերին կէնին ուրանց մեծ ախպեր, ուրանք լէ կէղնին պզտիկ ախպեր։

Էդ դևերուն լէ ադաթըմ կա, օր դորով կէրթան, ջուր ցախ, բան բերին։

Դոր կիգա Քըլսոյին։

Քըլսոն է, հեղրմ լէ օր ջուր չիտան ուրին բերե, կէլնի զտիկ կդնե վըր ուրին փեճին, Կէրթա հ՝աղբուր։ Կէրթա հ՝աղբուր, կփչե զտիկ ուռըցու, կդնե վըր փեճին ու կիգա։ Կիգա ախպըրտոց խեչ, զտիկ կդնե դետին ու կդառնա ախպըրտոց կասե.—Ախպըրտա՛նք, էդա տիկ ջուր ընծիկ մինակ չխիմե, հըտ ասելուն՝ կվերցու զտիկն ու կկոռծե վըր բերնին։

Կասե.—Էրթանք հ՝աղբուր, ջալկինք հ՝իգանք։

Ախպըրտանք կտեսնան զէդի, մաթ ու շիվար կմնան, կասին. —Էդի իմա՞լ մարդ է օր զտիկ ջուր մինակ խմեց։

Կվերցու զթիակ, փեղատ, կասե.—Վա՛լայի, կէրթամ զհ՝աղբուր, առնիմ հ՝իդամ էդա տեխ։

Ախպըրտանք կասին.—Դու քու աստված, զթիակ, փեղատ դիր գետին, չէղավ՝ ջուր մենք կէրթանք բերինք, քու ջուր բերել մզիկ պետք չէ։ Էդ տեսակով ջուր բերելուց կազատի։

Օրըմ լէ, դոր կիգա ցախին։ Կվերցու իրեք չորս չվան, կապե հ՝իրար, կէրթա սարու չորս բոլոր կփաթե ու կնստի։ Ախպըրտանք կիգան կտեսնան, օր Քըլսոն փաթեր է զչվան սարու չորս բոլոր ու նստի։

Կասին.—Ի՞նչ կէնիս։

— Բան չըմ էնի, էն օր հ՝ըմեն օր հ՝իգանք շալկինք առնինք էրթանք, մեկ հետ սար կշալկիմ, տանիմ մըր խեչ։

Ախպըրտանք կասին.—Դու ու քու աստված, քու փետ բերել,—կասին,—մղիկ պետք չէ, մըր իդարեն վըր էդոր չէ. օր սար հանիր բերիր տեխեն, էն բուս հ՝ուստե՞ն կէղնի։

Ուրանք կշալկին մեկ-մեկ շալակ փետ, կիգան, Քըլսոն հ՝ոգուց լէ կագատի։

Քառսուն դևեր կտեսնան Քըլսոյի ձեռքեն յախա չըն ազատի, միտք կէնին ճամփին օրըմ հորթկներու հ՝առեջ, էրթան սպանին։

Քըլսոն է, օրըմ կէրթա հորթըկներու հ՝առեշ, կես գիշեր կէղնի, կտեսնա օր, հինգ հոգի բալտեք ձեռք ուրանց էկան։ Հուշիկըմ կէլնի, զկուլապ կթալե վըր ծառու փըգորին, ինք լէ կէլնի ծառու գլուխ նստի։

Հինգ ախպեր կիգան, կտեսնան օր հրսոց ու գըմոց չկա, կասին.—Վա՜լայի, քնուկ է։

Կքաշին զբալտեքն ու կիգան փըգոգի շան, աղեկըմ կմանարին, կթողին կիգան ուրանց ախպըրտոց կասին.—Վա՜լայի, սպանեցինք, էկանք։

Կմնան լուսուն, Քըլսոն կէլնի կիտա զհորթկներ հ՝առեջ ու կքշե կիգա։ Կիգա, ախպըրտանք կտեսնան օր Քըլսոն մեկ լէ սալամաթ փըրթավ էկավ, կասին.—Վա՜լայի, մեկ լէ էկավ, իմա՞լ կէղնի։ Դրա էդ խոսքի մեջ կէղնին, Քըլսոն կմտնի ներս։

Կասե.—Ախպըրտա՜նք, հ՝էսօր էնքան լըվեր խածին զիս, օր զիմ կուլապ էրին լըվըստեկ, չթողին հանգիստ քնենք։

Ախպըրտանք կիշքին հ՝իրարու հ՝էրես, կասին.—Տեսեք էդա խըդար դըրբ զարկեր ինք, ախըր վրեն չառնե, կասե՝ «Լըվեր խածեր ին զիս»։ Էդոր բարին ինչ է, էդոր բարին էն է, օր ասենք մենք հ՝իրարուց կբաժնըվինք։ Կիսենք զուր հ՝իսեն իտանք հ՝ինք, առնե էրթա, փրթինք ազատինք։

Կբերին ինչ օր կէղնի ուրանց կկիսին, Քըլսոյին ջվալըմ օսկի կընկնի, չունքի մեծ ախպեր Քըլսոն կէղնի։

Կասին.—Դը՜, հ՝էլի առ ու գնա։

Կասե.—Ես էղնիմ ձըր մեծ ախպեր, ձըր խիրեն կտա՞նե հ՝էլնիմ շալկիմ, առնիմ էրթամ։

Դևերու ճար կկտրի, կբերին դնին էրկու ախպոր շալակ, կառնին կիգան։ Կառնին կիգան տուն։ Կիգան տուն, գուռ կզարկի։

Կնիկ կասե.—Էն ո՞րն է։

Իրիկն կասե.—Ես իմ, կնի՛կ, զդուռ բաց։

Կնիկ կէլնի օր զդուռ բանա, դևեք կմտնին ներս, զշալակ ուրանց օր կդնին զետին, չէ էդի դևի հևք է, օր կհևան, Քըլսոն կթռնի հ'էլնի կպի հ'առեք։

Կնիկ կասե.—Ուր պապուց մնացած գուրզըմ կա դրուկ պատի զլուխ, հ'էլավ կրերե, օր զձզիկ զարկե։

Կնիկ՝ զիրիկ սատանա, իրիկ՝ զկնիկ սատանա։

Զէդ օր կասին, հըմա դևեք կվերցուն զուրանց չարխըներ ու բըճանց կթռնին դուրս, փախնին էրթան։

Դևեք օր կթողին կէրթան, նոր Քըլսոն կիջնի կիգա ցած, կնստին ուրանց քեֆով, քանի սաղ ին՝ ուտին, խմին ու քֆրին զբիլմաղ մարդու հեր։

Աստծուց հ'իջավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։